

ՄԱՅՐԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ

(Տեսութիւն հայ սովորութեան իրաւունքից)

Խ. ՍԱՄՈՒԷԼ ԵԱՆՆԻ

V.

Մայրական իրաւունքի շրջանի խմբակցական ամուսնութիւնների ձևերը այնքան բնորոշ են եղել և այնպիսի մեծ նշանակութիւն են ունեցել ժողովրդական սովորութիւններում, որ այդ ամուսնական ձևերի՝ բազմաթիւ մնացորդներ գտնում ենք մեր ժողովրդի արդի բարձրի ու սովորութիւնների մէջ: Այդտեղ գտնում ենք հետքեր, որոնք ցայտուն կերպով ցոյց են տալիս, թէ ինչպէս կիւնը պատկանելիս էր եղել ամբողջ խմբակցութեանը, որի անդամները իրաւունք էին համարում նրա հետ ամուսնական անյարատեւ յարաբերութիւնների մէջ մտնելու: Հայ ժողովրդական բարձրում ներկայումս մնացած մայրական իրաւունքի հետքերը կարող են գոյութիւն ունենալ, իբրեւ փոխանցական տիպային երևոյթներ անցած-մեռածի և նոր ծնունդ սովորոյթների միջև: Ահա այդ մնացորդները հետախուզելիս տեսնում ենք թէ մայրական իրաւունքը իրականութեան մէջ սահմանափակում է աստիճանօրէն այնպէս, որ ամուսնական խառնակ յարաբերութիւններն, այսինքն խմբակցական ամուսնական յարաբերութիւնները նախ՝ սկսում են ընդհանրապէս կրճատուել ըստ ժամանակի և ապա՝ մասնակցող, ամուսնացող անձերի ընդհանուր թիւն էլ նօսարանում, նուազում է, յօգուտ միմիայն որոշ փոքրաթիւ անձանց ամուսնական յարաբերութիւնների իրաւունքների: Առաջին դէպքում ամուսնական այսպէս անուանած խառնակցութիւնը, սեռական խմբակցական անսահման յարաբերութիւնները այդ և կնոջ հետ դառնում են վայրկեանական, բուրձական երևոյթ, մի անգամ կատարուող միայն փաստ: Երկրորդ դէպքում նկատելի է, թէ ինչպէս մի խմբակցութեան այդ մարդկանց իրաւունքները կանանց ամուսնական խառնակցական կապերի մէջ մտնելու նկատմամբ միանգամայն վերացւում են և

այդ իրաւունքները վերապահուում են միայն խմբակցութեան զըլ, խաւորներին, ներկայացուցիչներին և այլ այսպիսի փոքրաթիւ արտօնեալներին և կամ վերապահուում են միմիայն այդ կնոջ ամուսնու մօտիկ ազգականներին, զլիաւորապէս և զբայրներին, նոյն իսկ հօրը, Այս երևոյթները ընտանիքի զարգացման պատմութեան մէջ երևան են դալիս իբրև մայրական իրաւունքների մեռացման փաստեր այն ժամանակից՝ երբ արդէն ամուսնական կապերը դառնում են աւելի տեղական, երբ այր և կին սկսում են միասին ապրել մի յարկի տակ, մի ընտանիք և մի գերդաստան կազմելով:

Եւ ահա կրբեմն գոյութիւն ունեցող այն մայրական իրաւունքները, որոնք բնորոշուում էին խմբակցական ամուսնութեամբ, խառնակեաց սեռական կապերով, ժամանակների ընթացքում փոխուում են իրենց փաստային գոյութիւնից մի այլ արտաքին ձևի, արտայայտուում են այն ձևաբանական իմաստով, թէ կինը իրաւաբանօրէն պատկանում է ոչ թէ իր միակ ամուսնուն, այլ ամբողջ խմբակցութեանը: Այս տեսակ իրաւաբանական ըմբռնումից հետևում էր այն սովորոյթը, որ կինը նախ քան ամուսնանալը պիտի պոռնկանար այդ նպատակին յատկապէս ծառայող տեղերում: Այդ սովորոյթը արդէն մենք առիթ ունեցանք տեսնելու կրօնական հետերիզմի և հիւրասիրական հետերիզմի փաստերի մէջ, որոնք գոյութիւն ունէին նաև հայերիս մէջ: Կրօնական հետերիզմի հետ սերտ յարակցուած է նաև մի պաշտամունք, որով ինքնըստինքեան այդ հետերիզմը սրբազան նշանակութիւն էր ստանում՝ դա այսպէս անուանած բնութեան և մարդուս ստեղծագործող, արտադրող ոյժերի կուլտը, որ այնպէս տարածուած էր հին և միջին դարերում: Այդ կուլտի արտաքին իմաստը, ձևը արտայայտուում էր նրանով, որ երկրպագում էին ու սրբազացնում առնական անդամը, որի օրինակները մեծ կամ փոքր տեսքով ցրուում էին տաճարներում, մեհենաներում: Դա էր հնդուաների Լինգամը, հրէաների Ֆէգորը, յոյների Պրիապը և լաթինացիների Ֆալլուսը, մի կրօնական սովորութիւն, որ դարերով ծաղկում էր Սիրիայում, Եգիպտոսում, Պարսկաստանում, Փոքր Ասիայի ժողովրդների մէջ, Յունաստանում, Իտալիայում: Ֆալլուսի կուլտը—դա մայրական իրաւունքների կրօնական-բարոյական երևոյթներից և հետևանքներից մէկն է, որ ընաւ երբեք անտես չի կարելի առնել ընտանիքի էվօլիցիօնի պատմութիւնը վերլուծելիս:

Նաև հին հայերի մէջ գոյութիւն է ունեցել Ֆալլուսի կուլտը, որի մասին գտնուում են բաւականի թուով սովորոյթների

մնացորդներ և ֆալլուսի բաւականաչափ օրինակներ ու ձևեր, որոնք յայնուհի են հնախուզական գիւտերի մէջ, Աւելորդ ենք համարում այստեղ կանգ առնելու և փաստեր յիշատակելու, որպէսզի ապացուցած լինենք ֆալլուսի գոյութիւնը հին հայերի հաւատալիքների մէջ: Այդ հարցի մասին արդէն մեզանից առաջ մի ընդարձակ ուսումնասիրութիւն է պատրաստել պ. Ե. Լալայեանը և լոյս է ընծայելու «Ազգագրական հանդէսի» յաջորդ հատորում:

IV

Մենք շեշտեցինք, որ մայրական իրաւունքի խմբակցական ամուսնութիւնների սեռական խառնակ կենակցութիւնները սամանափակում են մասամբ ըստ ժամանակի և մասամբ յօգուտ մի քանի անձերի՝ ցեղական կամ սերնդական գլխաւորների, և կամ մօտիկ ազգակիցների շրջանով: Ինչպէս են կայանում այդ սամանափակումները և ինչպէս են նրանք արտայայտւում ու պահպանւում այն սովորոյթների ու ծէսերի մէջ, որոնք գոյութիւն ունեն հայ ժողովրդի բարքերում: Տեսնենք, թէ ինչպէս երկու սեռերի փոխադարձ յարաբերութիւնները հասարակական դարգացման պրօցեսսում, կորցնելով իրենց նախնական հին սկզբունքը միանում, ոչնչանում են, աստիճանաբար սեղմուելով մի քանի որոշ անձերի խմբակով, որոնց միջավայրում այդ սովորոյթը կարողանում է տակաւին իր գոյութիւնը պահպանել սկզբներում իրաւաբանական նշանակութեամբ և ապա իբրև ոչնչացող, այլասեռուող մի երևոյթ:

Ամուսնական խառնակեաց յարաբերութիւնների ամենաբնորոշ հետքերն ու մնացորդները կարելի է տեսնել գլխաւորապէս հարսանեկան սովորոյթների մէջ, մի խորհրդի, որը ամուսնական կապերի սրբազործումն է ժողովրդի հայեացքով:

Ինչպէս յայտնի է, ամեն մի հարսանեկան տօնախմբութեան առաջին պայմանն ու սովորութիւնն այն է, որ փեսացուն հարսանիքի առաջին օրից ընտրում է գիւղի ազապներից մի խումբ՝ «մականեր» իրենց «մակարբաշիով» կամ «ազապբաշիով», որոնք կազմում են արտաքուստ մի տեսակ թիկնապահ թաղուորի և ամբողջ հարսանեկան տօնախմբութեան ընթացքում—սկսած առաջին օրից մինչև փեսի առաջատու մասնիլը—գլխաւոր ու առաջնակարգ դեր են խաղում հարսանեկան սովորոյթների մէջ, ղեկավարում և գոյն են տալիս բոլոր ծիսակատարութիւններին ու զուարճութիւններին: Այն բոլոր փաստերը, որոնք բնորոշում են ու պատկերացնում մականների խմբի յարաբերութիւնը դէպի

հարսանեկան ծէսերը, դէպի հարսնացուն ու փեսացուն, ցոյց են տալիս, որ նրանց մէջ պէտք է որոնել այն զաղափարը, թէ մի ժամանակ սերնդական գիւղի կամ որոշ խմբակցութեան բոլոր աղապները իրաւունք ունէին տիրանալու և ամուսնական յարաբերութիւնների մէջ մտնելու միևնոյն կնոջ հետ: Եւ զարմանալի չի թւում, երբ նկատում ենք, որ մակաները որոշ դէպքերում մինչև յայտնի սահմանը նոյնն են անում հարսի նկատմամբ, նոյն գիրքն են բռնած հարսանիքի մէջ, ինչ որ թագուորդ միշտ անբաժան են սրանից, միասին են գնում «հարսնածի», միասին նրա հետ հարսին եկեղեցի տանում և տուն բերում և վերջապէս նոյն իսկ հսկում են առաջատարին, որից կարծես խիստ շահագրգռած լինեն, որպէսզի «չարերը» չփնասեն փեսային ու չգրկեն սրան առնական ընդունակութիւնից: Հարսանիքի առաջին օրը փեսան գնում է բաղանիս իր մակաների ու քաւորի հետ. այնտեղ նա որոշ ծէսերով լուացւում, մաքրւում է նոր ամուսնական կեանքի մէջ մտնելու համար: Նոյնն են անում մակաները, որոնք շատ տեղերում հերթով նմանապէս մերկանում են ու լողանում բոլորի ներկայութեամբ, իսկ փեսան էլ մերկ սպասում է, մինչև որ բոլորն էլ աւարտեն իրենց լուացելը: Նոյնպէս և սափրելու ծէսում առաջ սափրւում է նորափեսան և ապա հերթով բոլոր մակաները: Բուլանը լսում էլ հարսնածի ճանապարհ ընկնելուց առաջ, երբեմն էլ անմիջապէս յետոյ փեսայի ընկերակիցների շապիկները կը հաւաքեն յատուկ հրաւիրեալների ձեռքով փեսայի տունը լուանալու համար, որ կը կոչուի աղպալուածք *): Ուրեմն մականերն էլ փեսայի հետ կատարելով նոյն ծէսերը կարծես պատրաստւում են նոյն խորհրդին, նոյն ամուսնութեանը, որին պատրաստւում է նաև փեսան: Այդ նկատմամբ մանաւանդ բնորոշ է մըկրկոյէի ծէսը Վարանդայում, երբ առաւօտեան այն օրի, որի երեկոյեան փեսան առաջատար է մշտնելու, մակաները ժողովւում են թագուորդի մօտ և քէփ անում, ժծառի, «լոյսերի» վրայ եղած մրգեղէնները ուտում են և միաժամանակ էլ քահանան կատարում է թագի վերացման ծէսը: Նոյն իրողութիւնը տեղի ունի Գանձակի գաւառում **):

Բացի այդ՝ մականերն ու մօտիկ ազգականները իրենց այնպէս են պահում հարսանիքի վերջին գիշերները, որով կարծես ցոյց են տալիս, թէ իրենք էլ որոշ իրաւունքներ ունեն դէպի հարսը: Այս բանը մանաւանդ բնորոշ է հետեւեալ սովորութեան

*) Բէնսէ—Բուլանըխ, եր. 106.

**) Ե. Լալայեան—Գանձակի գաւառ, եր. 40.

մէջ, Վարանդայում երբ հարսը հարսանիքի առաջին օրը մտնում է փեսացուի տունը, ընթրիք և քէփ է լինում, զիշերը ուշ հիւրերը ցրւում են և քնում է միայն փոքրիկ հարսնեղբայրը, որ քնում է հարսի մօտ և հակում է նրա վրայ: Սա չի թոյլ տալիս, որ հարսի քնած ժամանակ տնեցիք ու մօտիկ աղգականները բանան երեսը տեսնելու:

Քանի որ ազգայների և աղգականների խմբակների կողմից նկատւում են որոշ իրաւունքների հարսնացուի վերաբերմամբ, իրաւունքների, որոնք այլաբանօրէն արտայայտւում են վերոյիշեալ սովորութիւնների մէջ, պարզ է, որ փեսան ստիպուած է լինելու որևէ կերպով յարգելու նրանց իրաւունքները և ճանաչելով այդ իր կողմից էլ որևէ զիջում անելու է հարսին տիրանալու հարցում: Ժամանակակից մի քանի վայրերի ցեղերի մէջ տիրապետում է մի սովորութիւն, որ ամուսնացող աղջիկը առաջին զիշերը անց է կացնում յարաբերութիւն ունենալով հարսանեաց բոլոր այրմարդ-հիւրերի հետ: Մի քանի տեղերումն էլ հարսանիքի վերջին զիշերը նախ քան փեսի հետ առազաստ մտնելը հարսը յարաբերութիւն է ունենում իւր փեսացուի կողմից առաջարկած ընկերների հետ:

Սպանացի ճանապարհորդ Գ. Դէլավէզան պատմում է այդպիսի մի սովորութեան մասին, որ տիրապետում էր Մանտաս անունով Պերուական մի ցեղի մէջ. նոյնպիսի մի երևոյթ նկարագրում է Դիօտոր Սիկիլիացին Բալէարի կղզիների ցեղերի մասին և ճանապարհորդ Լանգստօրֆը Նուկագիվայի ընակիչներին մէջ, Նոյնանման փաստերի մասին տեղեկութիւններ կան Աֆրիկայի Ոսկէ Եղջի, Բրազիլիայի, Տիրէտի, Մովազնացիների կղզու ընակիչների մասին *):

Ժամանակների ընթացքում այդ տեսակ սովորութիւնները կուլտուրապէս զարգացող ժողովրդների մէջ և նոր բարոյական հայեացքների ներքոյ ի հարկէ վերանում են, սակայն և այնպէս իրենց հետքերը թողնում են մի այլ վերափոխուած սովորութեան մէջ, որը սրբազործուած է մի քանի ժողովրդների մէջ նաև եկեղեցական ծէսով: Դա այսպէս անուանած տուրկական զիշերներն են, երբ փեսան հարսանիքից յետոյ մի քանի օր, մօտաւորապէս 2—3—5 պիտի սպասէ և առազաստ չպիտի մտնի հարսի հետ: Հայերի մէջ, ինչպէս յայտնի է, ճնարօտի՜ զօրութեամբ նորապսակները չպէտք է ամուսնական յարաբերութիւն ունենան, մինչև որ քահանան յատուկ ծիսակատարութեամբ, Ծագ վերացումով

*) М. Ковалевский. Первобытное право, вып. II, стр. 29—30.

չհանի նարօտը, որից յետոյ հարս ու փեսան արդէն կարող են առաջաստ մտնելու իհարկէ ժողովուրդը ուրիշ կերպով է բացատրելու այս երևոյթը. նրա կարծիքով այդ երկու գիշերը չար ոգիներն են վխտում նորապսակների շուրջը և պատրաստ են փնասելու, մանաւանդ նորափեսային առնական ընդունակութիւնից զրկելու: Սակայն երբ նայենք վերոյիշեալ սովորութեան վրայ պատմական զարգացման տեսակէտից՝ այդ երևոյթը պիտի ըմբռնենք իբրև մի մնացորդ խմբակցական ամուսնական յարաբերութեան, որի վրայ իրաւունք ունէին փեսայի ընկերները, ազգականները հարսանիքից յետոյ, երբ աղջիկը, հարսը պարտաւոր էր ըստ սովորութեան իրաւունքի գոնէ մի-երկու օրով պոռնկանալու յիշեալ անձնաւորութիւնների հետ, նախ քան ամուսնու հետ զուգաւորուելը: Այդ ընկերներն այժմ անշուշտ այլ ևս չեն պարկում հարսի հետ, չեն խախտում նրա կուսութիւնը, սակայն այն օրերը ու այն ժամանակը, որի ընթացքում նրանք երբեմն ալևոր հնութեան մէջ ամուսնական իրաւունքներ ունէին հարսի վրայ, այնուամենայնիւ սուրբ են պահուում և օրինաւոր են ճանաչուում փեսացուի կողմից: Այդ սովորութեան այլասեռման սկզբնական մօմենտներում փեսան անշուշտ գոնէ ձևակա-նօրէն շարունակում էր ճանաչել իր ազգակիցների ու սերնդակից ընկերների իրաւունքները դէպի իր հարսնացուի կուսութիւնը, ուստի և ինքն էլ յարգելով նրանց այդ իրաւունքը 2—3 օր գուցէ և աւելի ձեռք չէր տալիս իր կնոջը: Փեսայի մէջ տակաւին ամուր էր նստած այն դադսփարը, թէ ինքը բնաւ իրաւունք չունի առաջաստ մտնելու հարսանիքի աւարտի առաջին օրերը, քանի որ այդ ժամանակամիջոցում հարսը պատկանում էր իր սերնդակից ազգայների խմբակին. և միայն այն օրից յետոյ, երբ վերջինները լիովին օգտուել էին իրենց իրաւունքներից, նա կարող էր տիրանալ իր հարսի մարմնին: Ահա այդ գնացած-մեռած իրաւունքի իմաստն է կաղապարուել սիմբօլական ձևով նարօտի և թագ վերացումի սովորոյթների մէջ: Իսկ ժողովրդական հայեացքներում իհարկէ այդ պահը առաջաստից փեսայի կողմից կորցրել է իր իսկական պատմական նշանակութիւնը և դարբերով հաստատուն է մնացել ու մնում է միմիայն սովորութեան իրաւունքի մշակած արգելական նօրմերի շնորհիւ, որոնցով պահանջուում է խստիւ, որ սուրբ պահեն նարօտի օրերը: Եւ բնական է, որ հայ ժողովրդի իրաւաբանական աշխարհայեացքը յիշեալ արգելական նօրմերը մարմնացնելու իր այն հաւատալիքների մէջ, թէ հարսանիքի օրերը մինչև թագ վերացումն ու առաջաստ մտնելը նորապսակները շրջապատւած են ու հալածուում

չար ոգիներին, մութ ոյժերի կողմից, որոնցից անհրաժեշտ է զդուշանալ:

Յիրաւի, նաբօտի օրերը հարսն ու փեսան անց են կացնում իրենց ժամանակ շատ ընտրոշ կերպով, որ միանգամ ևս ապացուցանում է մեր արտայայտած կարծիքի հաւանականութիւնը: Բուլանըխում «սովորութիւն կար հին ժամանակ 7 օր, իսկ այժմ 2—3 օր յետոյ նուրձ կտրել, այսինքն պսակ վերացուցանելոյ կարգը կատարել. այդ 2—7 օրերու մէջ փեսան առանձին կապրի իր ազապըարիներու հետ, իսկ հարսը իր հարսնայրերու հետ»: ¹⁾ Եւ ապա ժամանակը լրանալուց յետոյ, փեսան արձակում է իր ազափշարիներին և մտնում է առաքաստ: Նոյնն է գրեթէ կատարում Գանձակի գաւառում, ուր սակայն թագ վերացումը տեղի է ունենում 1—2 օրից յետոյ: ²⁾

Ախալցխայի գաւառում հարսանիքից յետոյ նորահարսը առաջին գիշերը քնում է մի սենեակում իր եղբօր հետ, որը պահպանում է նրան փեսայից. երկրորդ գիշերը հարսը քնում է փեսի ջրոջ հետ և ապա երրորդ գիշերն արդէն իր ամուսնու հետ ³⁾, Նոր-Բայազէտի գաւառում հարսանիքից յետոյ մինչև «Թագվերքը» թէև փեսան քնում է միասին հարսի հետ, սակայն յաւաքերութիւն չի ունենում նրա հետ. այդ նպատակով փեսի ձեռքին լինում էր միշտ մի թուր և գիշերը հարսի մօտ քնած միջոցին իր և նրա միջև դրած էր ունենում, որպէսզի չկարողանայ մերձենալ նրան: Միմիայն երբ կատարւում էր թագ-վերացի ծէսը քաւորի, ազապըաշու և մօտիկ բարեկամների ներկայութեամբ, փեսան վայր էր դնում այդ թուրը և ապա գիշերը իրաւունք ունենում առաքաստ մտնելու: ⁴⁾ Խիստ հետաքրքիր է տուրքական գիշերների սովորութիւնը Ջաւախքում: Այստեղ «գիշերը հարսը քնում է, քաւորին հանկեցնում, պառկեցնում, իսկ ինքը գալիս հարսնեղբօր հետ է պարկում. իսկ փեսան քնում է և մտնում քաւորի ծոցը»: ⁵⁾

Վերջին փաստի մէջ խիստ ընտրոշ գիծ է պարփակուած, որցայտուն պատկերացնում է այն գաղափարը, թէ հարսը այդ օրերը իրօք պատկանում է ոչ թէ փեսին, այլ նրա խմբակի ան-

¹⁾ Բէնսէ—Բուլանըխ, եր. 113.

²⁾ Ե. Լալայեան—Գանձակի գաւառ, Բ. հատ. եր. 36—40.

³⁾ Свадебные обычаи Ахалцихских армян—«Этнографическое обозрение», Москва 1889. № 1.

⁴⁾ Ե. Լալայեան—Ազգագրական հանդէս, հատ. XVI, եր. 29.

⁵⁾ Ե. Լալայեան—Ջաւախք, եր. 150.

դամներին, մեծաւորին, որը այս դէպքում անձնաւորւում է քաւորի մէջ: Հարսը հանւեցնելով քաւորին, սիմբօլական ձևով կարծես հաստատում է այն իրաւունքի զաղափարը, թէ ինքը պատկանում է այդ գիշեր նրան և ոչ թէ ամուսնուն, որը կնոջ փոխարէն պատկում է քաւորի հետ միասին:

Ի վերջոյ յիշենք նաև մի սովորոյթ, որ գոյութիւն ունի Գանձակի մի քանի գիւղերում և քաղաքում թագ վերացումից առաջ: Այստեղ նախ քան թագ վերացումը մի քիչ կտրում են հարսի մազերից, երպէս զի նրա սիրտը սկսեալանց տան վրայ լինի: 1) Այս ծէսի նշանակութիւնը հասկանալու համար դիմենք պատմութեանը: Յոյն փիլիսոփայ-պատմագիր Լուկիանը, որ ապրում էր երկրորդ դարում Քր. ծն. յետոյ, աւանդում է, որ իր ժամանակները Փիւնիկիայի նորատի օրիորդները կարող էին ազատուել այն պարտքից, որ դրել էր նրանց վրայ կրօնը, այն է զոհաբերել իրենց կուսութիւնը աստուածներին (կրօնական հետերիզմի կուլում)՝ միայն նրանով, որ այդ զոհաբերութիւնը իրենց մարմնի գնով պիտի փոխարինէին մի այլ տեսակի զոհով, այսինքն իրենց ծամերի կտրելովը: Վերջին նորամուտ ծէսը անշուշտ երբեմն գոյութիւն ունեցող պարտաւորեցուցիչ սովորութեան՝ կրօնական հետերիզմի՝ մեռացման բացայայտ նշանն է: Այդ սովորութիւնը, ինչպէս երևում է Նեսէրիոսի վկայութիւնից, մասամբ պահպանւում էր տակաւին մինչև Կոստանդին կայսեր ժամանակները Հելիօպօլիսի տաճարում: 2)

Ուրեմն վերոյիշեալ Գանձակի ժողովրդի սովորութեան մէջ դանում ենք մի մնացորդ այն զաղափարի, թէ մինչև թագ վերացումը հարսը չի պատկանում իր փեսային, այլ համարւում է խմբակցական խառնակեաց ամուսնութեան կին և իր մազերը (ծամերը) կտրելով նա սիմբօլական ձևով զոհաբերում է իր կուսութիւնը, այսինքն ձևականօրէն կատարում է իր ամուսնական սեռական պարտքը դէպի իր փեսայի խմբակի, սերնդի անդամները՝ այն է ընկերներն ու մօտիկ ազգականները և ապա իր իսկական ամուսնու հետ զուգաւորւում:

Մեր առաջ բերած բոլոր փաստերի մէջ, որոնք ցոյց են տալիս, թէ շնարօտի զօրութեամբ փեսան հարսանիքից մի քանի օր շարունակ չի կարող առաջաւոր մտնել, դանում ենք մնացորդներ, որոնք այլաբանօրէն պատկերացնում են խմբակցական

1) Ն. Լալայան-Գանձակի գաւառ, Բ. հատ. եր. 40.

2) Dulaure—Des divinités generatrices ou du culte du Phallus եր. 170—172.

ամուսնութեան նշանակութիւնը և սրա դէմ էլ կանգնած է նոր զարգացած անհատական ամուսնութեան զաղափարը: Ժողովրդական հարստանեկան սովորութիւններէ մէջ պահպանուել են իբրեւ ֆիկցիա այդ երկու տեսակ ամուսնական յարաբերութիւնների փոխադարձ կախումն: Երաբերութիւնների, որոնք ներկայացնում են այն պատմական մօմէնտը, այն կէտը, որ իւր պատմական զարգացման ընթացքում կանգ է առել մէկը և ծագել է միւսը. սակայն և երկու աշխարհայեացքներն էլ իրենց գոյութեան կուտում կաղապարուել են երկու տարբեր սովորութեան-իրաւական երեոյթների մէջ, որոնք մինչև օրս էլ իրենց պահպանողական ոյժի շնորհիւ, թէև կորցրել են իրենց նախկին իսկական նշանակութիւնը, իրական ընոյթը, բայց և այնպէս մնացել են իբրեւ ձևական սովորոյթներ, արտաքուստ անխմստ դարձած փաստեր:

VII

Երբ ժողովրդի հայեացքներում միանգամայն տապալուում, անհետանում է մայրական իրաւունքի և սրա հիմք կազմող խառնակեցական ամուսնութեան ձևի իրաւարանական գոյութիւնը, այն ժամանակ տեղ են բռնում նախկին իրաւարանական հիմնարկութիւնների միանգամայն հակադիր երեոյթներ իրենց համեմատ հակառակ իրաւական հայեացքներով: Պատմականօրէն զարգացած նոր սոցեալ-տնտեսական պայմաններում մայրական իրաւունքի տեղը զբաւելով, տրամադծօրէն տարբեր մի իրաւական հիմնարկութիւն՝ հայրիշխանութիւնը, պատրիարխատը, ակներև է, որ սրա հետ էլ սկսում են տիրապետել միանգամայն այլ սովորութիւններ ու հասկացողութիւններ, որոնք մի տեսակ ընկացիա են հանդիսանում ժողովրդի նախորդ կեանքում ծաղկող իրաւարանական աշխարհայեացքին:

Հայրիշխանական աշխարհայեացքը, յաղթանակելով մայրական իրաւունքի աշխարհայեացքի վրայ, պահանջում և պաշտպանում է ըստ իր կարգին հակառակ սկզբունքներ: Նա խստիւ հակածում է ամուսնական խառնակեցութեան ձևը և սրա հետեանքները՝ սրբազործուած ժամանակաւոր պոռնկութիւնն և կուսութեան անհրաժեշտ բացառումն: Այդ ամենի փոխարէն հայրիշխանական սկզբունքը իբրեւ երաշխաւորութիւն իր դաւանած նոր իրաւական հայեացքներին՝ պահանջում է կնոջ կուսութեան անպայման պահպանումը մինչև ամուսնութիւն, մինչև իր մարդու հետ առաջաստ մտնելը: Սա մի նոր աշխարհայեացք է ժողովրդի մտաւոր-բարոյական մթնոլորդում, նրա հասարակական-ընտանե-

կան փոխադարձ յարաբերութիւններում, որ դոյութիւն է առել ու հաստատուել դաժան մրցումով հանապազ մաքառելով նախկին մայրական իրաւունքի ընտանեկան բարձրի դէմ: Այդ մաքառման հետեանքն է, նախկին ամուսնական սովորութիւնների այդ կենսական կայունութիւնն է, որ հայրիշխանական նոր հայեացքների մթնոլորդում յաղթանակող իրաւագիտակցութիւնը ամեն ջանք է դործադրում պաշտպանելու, ամբապնդելու իր նոր իրաւունքները և հաւածելու նախկին բարձրը: Գրեթէ բոլոր ժողովրդների ամուսնական յարաբերութիւնների հայրիշխանական շրջանում նկատելի է միևնոյն ձգտումը, թէ հարկէ որոշ հասարակական կոնտրոլ, դոնէ փեսացուի սերնդակիցների, ազգակիցների կողմից հաստատել և հարսի կուսութեան առհաւատչեան պահանջել: Ահա թէ ինչու ամուսնական ու հարսանեկան բազմաթիւ սովորութիւնների մէջ գտնում ենք այն հետաքրքիր ու ընդհանրացած փաստը, որ առաջատու մտնելուց յետոյ, առաջին առաւօտը հարսանիքի հիւրերին ու ազգականներին, որոնք յատուկ այդ նպատակով են ժողովուած լինում և հիւրասիրում, 'ի ցոյց է հանւում հարսնացուի շապիկը կամ որևէ սպիտակեղէն սաւանը արեան բծերով, որոնք գոյացել են առաջատար գիշերը կուսութեան խախտման միջոցին: Աւելորդ ենք սեպում փաստեր բերելու օտար ժողովրդների՝ ինչպէս օսերի, նաև ռուսների և մի քանի ուրիշ սլաւոն ցեղերի սովորութիւններից, ¹⁾ այլ բաւականա՜նանք լոկ հայ ժողովրդի մէջ դոյութիւն ունեցող այդ սովորութիւնների փաստերը արձանագրելու:

Նոր-Բայազէտի գաւառում առաջատար գիշերուան առաւօտեան թազուորի ամուսնացած քոյրը կամ մօրաքոյրը գալիս է վերցնելու սաւանը և խմբելով իր շուրջը տան մեծ անդամներին, ցոյց է տալիս կուսութեան նշանը ²⁾: Գողթան գաւառում «գիշերը Յնգահը պատրաստում էր առաջատու և հետեալ առաւօտ սաւանը տանում, ցոյց տալիս թազուորի և հարսի մայրերին» ³⁾: Բուլանըխում առաջատար գիշերից «մէկ երկու օր յետոյ կը հաւաքուեն կանայք տեսնելու հարսի երես սպիտակութեան՝ կուսութեան՝ նշանը, արեան բծեր ճերմակ սաւանի վրայ» ⁴⁾: Զաւախքում չորեքշաբթի գիշերը, երբ հարս ու փեսան առաջատու են մտնելու՝ խոհարարուէին պատրաստում է անկողինը և ինքն էլ

¹⁾ М. Ковалевский—Современный обычай и Древний законъ—т. 1. Եր. 201.

²⁾ «Աղգազրական հանդէս». գիրք XVI, Եր. 29.

³⁾ «Աղգազրական հանդէս». գիրք XII, Եր. 134.

⁴⁾ Բէնսէ—Բուլանըխ, Եր. 113.

դռան հետը պահ է մտնում, սպասելով կուսուլթեան ապացուցանող շարասանին: Եթէ աղջիկը կուսուլթիւնը կորցրած է լինում, վախենալով այն մեծ նախատինքից, որ կրելու է տնեցիներից ու սրա ազգականներից, արտասուում և ներողութիւն է խնդրում ամուսնուց, որը կաշառում է խոհարարուհուն. վերջինս մի աղաւնի է մորթում և արիւնոտում չարսաւը: խոհարարուհին տանում է չարսաւը, ցոյց է տալիս նախ փեսին և ապա հարսի մօրը, շնորհաւորում նրանց ու ընծաներ ստանում: Հինգշաբթի առաւօտ հրաւիրում են ազգական ու զրկից կանայք. այդ օրը բացառապէս զրանց է պատկանում: Նախ քան ճաշի նստելը հրաւիրուածներին աչքի լոյս են տալիս և հնումը ցոյց էին տալիս չարսաւը ¹⁾: Վարանդալում խստութեամբ պահանջուում է կուսութեան ապացոյց սաւանը, որ հարանաքոյրը տանում է հարսի մօրը և սկեսորին ցոյց տալիս: Մի փոքր յետոյ զալիս են մօտ ազգական կանայք ճաշի լոյս, այսինքն շնորհաւորելու, որ հարսը կոյս է եղել: Բոլորը հիւրասիրում են և ուրախութիւն են անում ²⁾: Նոյն սովորութիւնն է տիրում Գանձակի ³⁾ և Ախալցխայի ⁴⁾ գաւառներում: Նիժ գիւղում (Նուխուլայ գաւառում) փեսամայրը կուսութեան առհաւատչեան առաջաստից վերցնելով միամտում է կոյսի անարատութեան մէջ և ի նշան շնորհակալութեան նորահարսի ծնողներին ուղարկում է մազա (օղի, հալէ, զանազան մրգեր ⁵⁾։

Վերոյիշեալ բոլոր փաստերը բաւական են ապացուցանելու, որ արիւնոտ սաւան ցոյց տալու ներկայումս պահպանուած սովորութիւնը ուրիշ ոչինչ է, եթէ ոչ մի մնացորդ այն իրաւունքից, որով հնումը աղայի ազգակիցների համայնքը օգտւում էր նորահարսի կուսութիւնը խիստ կոնտրօլի ենթարկելու համար: Իսկ կուսութեան համայնական այդ կոնտրօլն էլ մի պատմական հետեանք է մայրական իրաւունքի ընտանիքի շրջանում երբեմն գոյութիւն ունեցող ամուսնական խառնակիաց յարաբերութիւնների տիրապետութեան:

Դա այսպէս ասած ընդհանուր հիմունքներ, աւելի լայն չափերով վերցրած բացատրութիւններ են, որոնցով փորձում ենք լուսարանելու կուսութեան առհաւատչեայի փաստը: Սակայն վեր-

¹⁾ Ե. Լալայեան—Ջաւախք, եր. 151.

²⁾ Նոյնը—Վարանդա, եր. 142—143.

³⁾ Նոյնը—Գանձակի գաւառ, եր. 40.

⁴⁾ Этнографическое Обозрѣніе 1889 № 1—Свадебные обычаи Ахалцыхскихъ армянъ.

⁵⁾ «Արձագանք», 1894 թ. № 19—Նիժի սովորոյթներից:

ջինս կարելի է աւելի սահմանափակ պատճառաբանութեամբ ու աւելի նեղ իմաստով բացատրել: Նախորդ երեւներում առիթ ունեցանք արդէն շնչտելու, որ փեսան ըստ նարօտի մի քանի օր իրեն հեռու պահելով առաջատուից, ձեռնառնօրէն կարծես ճանաչում և ընդունում է շրջապատող համագիւղացիներին, այն սերնդակից ազապներին, իրաւունքը նորահարսի հետ ամուսնական սեռական յարաբերութիւն ունենալում: Կուսութեան ապացոյցի ներկայացնելը և այն կօստրօյը՝ որ պահանջում է ազգակիցների ու հարկան գրկիցների կողմից—մի սովորութիւն է, որով հաստատուում է, թէ յիշաւի փեսան ճանաչում է իր ազապ ընկերների իրաւունքները իր կնոջ վերաբերմամբ և սրբութեամբ կատարում է այն պարտաւորութիւնը, որ դրուած է նրա վրայ, այսինքն չմտնել առաջատու առաջին երեք օրերը ու ձեռք չտալ իր նօրատի կնոջը այն օրերին, որոնք սովորութեական իրաւունքի համեմատ մի ժամանակ իրեն չէին պատկանում, այլ իր սերնդակից աշապներին: Յամենայն դէպս, ինչպէս տեսնում ենք, երկրորդ լուսաբանութեան հիմքն նոյնն է և իսկապէս բղխում է առաջի բացատրութիւնից ու հիմնաւորում է այն իրաւական հայեացքներով, որոնց վրայ է կանգնած մայրական իրաւունքի ընտանիքը ու սրան յարակից խառնակ ամուսնական յարաբերութիւնները:

VIII

Հայ ժողովրդի հասարակական-ընտանեկան կեանքում այդ մարդկանց ու կանանց փոխադարձ յարաբերութիւնների մէջ կը գտնենք խիստ հետաքրքիր ու ընդունալի գծեր, որոնց վերլուծումն մեզ նմանապէս կը ծառայէ իրրև փաստ հիմնաւորելու, որ հայ ընտանիքի էվօլյուցիօնի պատմութեան մէջ կղել է այնպիսի շրջան, ուր տիրել է մայրական իրաւունքը իր խմբակցական-ամուսնական կապերով: Ամենաաւելի ընկնող ու համատարած երեւոյթը հայ ժողովրդի սովորութիւնների մէջ այն է, որ հարսը գերդաստանում իրաւունք չունի խօսիլու իր ամուսնու այդ ազգականների հետ, բացի երեխաներից. նոյն իսկ չի կարող խօսել իր սեփական ամուսնու հետ օտարների ներկայութեամբ: Մինչև առաջին զաւակ ծնելը, իսկ շատ տեղերում էլ 7 ամբողջ տարիներ շարունակ և աւելի, պսակադրութեան առաջին օրուանից սկսած հարսը երևում է մարդկանց առաջ երեսը քօղով ծածկած ու բացատրւում է ամենքի հետ միմիկայով: Բուլանբուսմ ընդ հարսը չպէտք է խօսէ իր սկեսրայրի հետ ցմահ, կեսուրի հետ մինչև 1—2 որդի ծնելը, տէգրերու հետ մինչև 10—15 տա-

րի և երբեմն մինչև խորին ծերութիւնը. տալերու հետ 5—6 ամսից մինչև մէկ տարի. բաժան դասերու (մարդու ազգականներու) հետ մինչև 10—15 տարի (միայն մարդոց): Ընտանիքից ու զերգաստանից դուրս ամեն կին ցմահ իւր կնքաւորի հետ ոչ միայն խօսալու սովորութիւն ու իրաւունք չունի, այլ և ներկայութեան կ'ընկը մեղք կը համարուի: Նոր հարսները պարտաւոր են նաև դրացի ծերերու պատիւը պահելու համար, իբրև իրենց սկեսրայրի հետ չխօսել 5—6 տարի: ¹⁾ Նոյն երևոյթը իշխում է զրեթէ առանց բացառութեան բոլոր հայերի մէջ: Սակայն ոչ միայն մեր ժամանակակից հայերի սովորութեական իրաւունքի մէջ ենք հանդիպում այդ փաստը, այլ և հայերի հին պատմական կիանքում մի քանի, թէև կցկտուր, տեղեկութիւնների համաձայն դոնում ենք նոյն երևոյթը:

Փաւստոս Բիւզանդը պատմում է մի հետաքրքիր էպիզոդ, որից կարելի է հզօրեացնել, որ հարսը ոչ միայն խօսելու, այլ և իր հրեար ցոյց տալու իրաւունք չունէր իր ամուսնու ազգականներին. «Ապա առ համբաւ ցանկութեան անուանն տրփեալ լինի մին ևս հօրեղբօրորդին Գնելոյ, որում անուն Տիրիթ կոչէր: Վասն որոյ անկանէր ի գաղտագողոնս, մինչ զի զնուն իւր տեսանել կարասցէ: Ակներև է, թէ ինչու այստեղ Տիրիթը ստիպուած էր թաքնուելու, որպէսզի կարողանար տեսնելու իր հարսի հռչակուած դեղեցկութիւնը:

Զուր չենք պատահում այս կամ այն պատմագրի նկարագիրներում, թէ հայ նախարարներն ու իշխաններն ունէին յատուկ կանանոցներ, ուր նրանց կանայք, այսինքն հայազն տիկիները, ապրում էին առանձնացած իրենց ամուսիններից, մանաւանդ սրանց այր-ազգականներից, և շրջապատուած միայն իրենց նաժիշտներով ու ծառաներով:

Ինչո՞վ բացատրել հայ ժողովրդական բարքերի մէջ տիրապետող այն փաստը, որ կանանց խտրւաբերուած էր ոչ միայն խօսել զերգաստանի այր մարդկանց հետ, այլ և երևալ ընդհանրապէս օտար այր մարդկանց և նոյն իսկ իր ամուսնուն այդ օտարների ներկայութեամբ: Արդեօք դա պատմական անհրաժեշտութեամբ զարգացած մի սովորութիւն չէ՞ այն զարեշրջանից, երբ մայրական իրաւունքների ընտանիքի աւերակների վրայ սկսեց բարձրանալ պատրիարքատական ընտանիքի՝ նահապետական զերգաստանի շէնքը և երբ այդ երկու սոցիալ-կուլտուրա-

¹⁾ Բէնսէ-Բուլանըղ.

²⁾ Փաւստոս Բիւզանդ. զիրք Դ. գլ. ԺԵ. եր. 99. Ս. Պետերբուրգ, 1883.

կան շրջանների սովորութեան-իրական հայեացքները իրար ընդհարուցին. մի կողմից անցեալ սովորութիւնների՝ տիրապետող խմբակցական խառնակեաց ամուսնական ձևերի և միւս կողմից՝ դրա բնակցիան՝ այրմարդու բացարձակ տիրապետութիւնը իր կնոջ վրայ: Այդ տիրապետութեան և իշխանութեան համար, այդ նոր սկսուող ընտանեկան—ամուսնական ձևերի ամրապնդելուն համար անկասկած անհրաժեշտ էին նաև իրաւաբանական խիստ նորմեր, արգելումներ:

Ահա այս տեսակ արգելումներով էին ձգտում կանանց իսպառ հեռացնել այր մարդկանց հետ որևէ շփումն ու յարաբերութիւն ունենալուց: Այսպէս մեկուսացնելով կանանց, կարծում էին միանգամայն ոչնչացնել այր մարդկանց ու կանանց միջև որևէ ֆիզիկական մերձեցման այն հնարաւորութիւնը, որ երբեմն ալեւոր հնութեան մէջ կազմում էին առանձին ազգակցական խմբակցութիւնների բոլոր համակենակից անդամներին պատկանած իրաւունքները: Ուշադրութեամբ դիտելով իրականութեան մէջ նկատելի փաստերը, անշուշտ իւրաքանչիւր հետազոտող առանձնապէս պէտք էր կանգ առնէր ու հետաքրքրուէր այն բնորոշ դժով, որ կանանց չխօսկանութեան առանձնակի յիշած դէպքերը գերդաստանի որոշ անդամների հետ և որոշ տարիներով ունեն իրենց առանձնայատուկ նշանակութիւնը: Ակամայ մի հաւանական ենթադրութիւն է ծնունդ առնում, որ զուր և աննպատակ կերպով ժողովրդի սովորութեան իրաւունքը չէր մշակի առանձին նօրմեր, որոնցով կարգաւորուէին կանանց չխօսկանութեան երևոյթներն ըստ ժամանակի ու տեղի իրենց գերդաստանի իւրաքանչիւր այր մարդու վերաբերմամբ. մի ենթադրութիւն, որը մատնանշում է, թէ այդ չխօսկանութիւնը հետեանք է մայրական իրաւունքի և հայրիշխանութեան՝ երկու տրամագծօրէն տարբեր ընտանեկան-հասարակական հիմնարկութիւնների զոյուրեան կռուի:

Նոյն պատմական-հասարակական նշանակութիւնն ունի նաև այն համատարած սովորութիւնը, որ հարսերը հայ նահապետական գերդաստանական շրջանում ամուսնութեան, հարսանիքի առաջին օրից սկսած ծածկում են երեսը քօղով: Այստեղ էլ նոյն սկզբունքն է պարփակուած, որի մասին վերը խօսեցինք: Քօղով ծածկուելով, նորահարսը ազատ էր մնում գերդաստանի և օտար այր մարդկանց աչքերից: Նա իրաւունք չուներ իր քօղը բարձրացնելու նրանց ներկայութեամբ ու երևալ նրանց հայեացքներին: Միայն երբ հարսը արդէն ծնում էր զաւակ ու մայր էր դառնում, ուրեմն երբ արդէն այդպիսով նա իրաւաբանօրէն ու փաստօրէն

ճանաչում էր հասարակութեան առաջ իրրեւ միմիայն իր ամուսնուն, իր զաւակի ծնողին պատկանող կին, այն ժամանակ միայն նա կարող էր քողը հեռացնել ու անվտանգ և ապահով կերպով ցոյց տալ իր երեսը շրջապատող այր մարդկանց:

Գերդաստանի անդամները փոխադարձ յարաբերութիւնների մէջ նկատելի է նաև մի այլ բնորոշ գիծ, որի բացատրութիւնը վերստին պէտք է որոնել մայրական իրաւունքի ընտանիքի պատմական շրջանի իրաւաբանական սովորութիւններում: Դա է այն սառն, մինչև կոպտութեան աստիճանին հասած անհամբոյր, առերես անտարբեր վերաբերմունքը ամուսնու կողմից դէպի իր կինն ու երեխաները: Ամուսինները իրար երբէք օտարների առաջ սեփական անուններով չեն կանչում: Սովորաբար կինը իր ամուսնու նկատմամբ օտարներին ասում է. «գլխատէրս»: «իմ մարդս», «մեր հայր», «տղուս (անունը) հէրը», «այս ինչի (իւր սկեսրայրի անունը) տղէն» և այլն: Նմանապէս է ասում այր մարդը իւր կնոջ վերաբերմամբ: Իրար կանչելիս մարդ ու կին բաւականանում են միմիայն բացականչութիւններով՝ «էյ, սյ, ախլի», «էյ, սյ մարդ» և այլն: Մարդու այս տեսակ վերաբերմունքը դէպի իր կինը գերդաստանի անդամների ներկայութեամբ հասկանալի կը լինի, եթէ ներկայացնենք մեզ այն դրութիւնը, որ ստեղծում է, երբ մայրական իրաւունքի ընտանիքի դէմ սկսում է զոյանալ հայրիշխանական գերդաստանը, երբ այդ նոր հասարակական յարաբերութիւնների մթնոլորտում, տակաւին թարմ են այն յիշողութիւնները, այն սովորութիւնների մնացորդները, թէ կինը պատկանում է ոչ թէ մի ամուսնուն, այլ ամբողջ ազգակից, սերնդակից համայնքին: Իրաւաբանական սովորութիւնները, ժողովրդական իրաւական հիմնարկութիւնները խիստ պահպանողական ընդթում են. և նոր զաղափարը, նոր հիմնարկութիւնները միայն յաժառ ու դարեւոր մրցումով են կարողանում հաստատուել ժողովրդի կեանքում, միայն քայլ առ քայլ իրենց պատմական դարգացման ընթացքում կարողանում են դուրս վանել ասպարիղից հին իրաւաբանական աշխարհայեացքները: Հայրիշխանական դադափարի տիրապետութեամբ կինը, դաժնալով ամուսին բացառապէս մի մարդու, կատարելով իր ամուսնական պարտականութիւնները միմիայն դէպի այր մարդը, այնուամենայնիւ գոնէ ձեռկանորէն, ֆիկալի պիտի համարուէր կին նաև ընտանիքի միւս անդամների, որոնց առաջ իւր իսկական ամուսինը բնականաբար իրաւունք չէր համարէր իրեն զուրգուրալ, հեղահամբոյր վերաբերուել դէպի կինը, որպէսզի դուրանով նոր հասարակական ընտանեկան կազմակերպման առաջին քայլերում աղիթ չտար մտածե-

լու, թէ նրանք զրկուած են այդ կնոջից, թէ երբեմն նրանց պատկանած ամուսնական իրաւունքները անցել են այժմ միայն իրեն:

Վերջապէս այդ տեսակ սառն, կոպիտ յարաբերութիւններ այր և կնոջ մէջ կարող էին դոյութիւն ունենալ այն հասարակ պատճառով, որ մայրական իրաւունքի մթնոլորտում բնականօրէն բացակայում էր որևէ քնքոյշ, մեղմ ու սիրալին վերաբերմունք դէպի կինը, որի հետ ամուսնական յարաբերութիւններ էին ունենում իսկամթիւ այր մարդիկ և այն էլ կարճատև, զուցէ և պատահական հանդիպումով:

Նոյնութեամբ հարկ է բացատրել հայերի սառն ու առերես անտարբեր վերաբերմունքը դէպի իրենց հարազատ զաւակները: Գանի որ մայրական իրաւունքի ընտանեկան կազմի մթնոլորտում որդիները դաճում էին բացառապէս մօր ձեռքի տակ ու անյայտ էին իրենց ծնող-հօրը, ինչպէս և վերջինս իր զաւակներին, ակնհերև է, որ հայրիշխանական գերդաստանի առաջին քայլերում աւանդաբար շարունակուելու էին արտաքուստ պահպանուելու նոյն յարաբերութիւնները հօր կողմից դէպի իր զաւակները. յարաբերութիւններ, որոնք զուրկ էին հայրական հոգացողութիւնից, զուրգութիւնից: Ահա թէ ինչու հայ նահապետական գերդաստանում ամօթալի ու դատապարտելի է թուում հօրը իր զաւակներին օտարների առաջ գրկախառնելու, փաղաքելու և այլն: Դա մի սովորութիւն է, որ զարմանալի կերպով պահպանուել է բոլոր ժողովրդների նահապետական գերդաստանական շրջանում, ինչպէս կովկասի լեռնականների, սլաւոն ցեղերի գերդաստաններում և այլն:

IX

Ով փոքրիշատէ ծանօթ է հայ ժողովրդական ընտանեկան կեանքին, նամանաւանդ հարսանեկան սովորութիւններին, նա անշուշտ նկատած կըլինի, թէ ինչ մեծ դեր է խաղում այդտեղ քաւորը: Առանց քաւորի չի կատարում ոչ մի ընտանեկան նշանաւոր դէպք. առանց նրա մասնակցութեան չի անցնում ոչ մի ընտանեկան հանդէս, նամանաւանդ հարսանիքի ու ծննդաբերութեան դէպքերում: Շատ հայաբնակ գաւառներում խաչեղբայրը տոհմական է լինում: Շարունակ միևնոյն տոհմի սերնդներից է հրաւիրում իւրաքանչիւր գերդաստան իր խաչեղբայրներին: Անհրաժեշտ չէ, որ միշտ միևնոյն անձը լինի խաչեղբայր, բաւական է, որ միևնոյն տոհմից լինի: Շատ հազուադէպ է պատահում, որ փոխեն իրենց սովորական տոհմական քաւորին. և ընդհանրապէս քաւոր փոփոխելն էլ մեծ անպատուութիւն, անարգանք է

սեպուղում: Քաւորները խիստ մեծ յարգանք են վայելում սանամորանց կողմից. ամեն մի ուրախութեան և տխրութեան դէպքում քաւորը ներկայ է գտնուում, առաջնակարգ դեր է խաղում ու նախամեծար պատիւ ստանում: Հարսը, սանամայրը մինչև մահ երբէք չի խօսում նրա հետ. մինչև անգամ նրան հեռուից տեսնելիս թաք է կենում և նրա տան դռնից բնաւ երբէք չի անցնում *): Վերլուծելով այդ և համանման բազմաթիւ փաստերը մեր ժողովրդական սովորութիւններից ու բարքերից՝ կընկատենք, որ քաւորը հանդէս է գալիս միշտ կարծես իբրեւ մի բաղկացուցիչ անդամ փեսայի գերդաստանի, որին պատկանելու է նաև նորահարսը: Հետևաբար քաւորը նորահարսի վերաբերմամբ արտաքուստ գրոնուում է նոյն սահմանափակ յարաբերութիւնների մէջ, որպէս և փեսացուի գերդաստանի մնացեալ անդամները: Ամենայն հաւանականութեամբ քաւորի այդ տեսակ բացառիկ դրութիւնը, մի կողմից՝ իբրեւ մի անհրաժեշտ ու աչքի զառնող անձն, առանց որի չի անցնում որևէ ընտանեկան հանդէս, իսկ միւս կողմից՝ իբրեւ անձն, սահմանափակուած իր արտաքին յարաբերութիւնների իրաւունքով հարսի նկատմամբ գերդաստանի միւս այլ անդամների հետ համահաստատ չափով, ըզխում է դարձեալ այն փաստից, որը կրում է երբեմն զոյութիւն ունեցող խառնակեցական ամուսնութեան հետքեր:

Այն գլխաւոր ու նշանաւոր դերը, որ հարսանեկան ծիսակատարութեան մէջ համեմատաբար բոլոր ներկայ եղողների հետ յատկացուած է բացառապէս քաւորին. պաշտպանել թագաւորին և թագուհուն անտեսանելի ու տեսանելի չարիքից ու թշնամիներից, որի համար էլ նա բնաւ չպիտի հեռանայ ոչ մի վայրկեան նորապսակներից հարսանիքի ամբողջ ընթացքում և հանապաղ սուրը իր ձեռքում ունի բռնած,—անհ զա մեզ հիմք է տալիս եզրակացնելու, որ այն ընտանիքն, որի քաւորն է ինքը, կարծես կախումն ունի նրանից և մի տեսակ պարտաւորուած է նրա առաջ: Ուրեմն քաւորը, օժտուած լինելով այդպիսի բացառիկ նշանակութեամբ փեսացուի ընտանիքում, տնկասկած պէտք է ունենար նաև բացառիկ իրաւունքներ կանանց վերաբերմամբ:

Պէտք է ենթադրել, որ քաւորի այդ գերքին առանձնայատուկ դերը վերջին մնացորդ հետքերն են, որոնք բնորոշում են գերդաստանի սերնդական կազմը, ուր ամեն ինչ կատարւում էր ու կախումն ունէր սերնդական նահապետից, աւագի գերիշխա-

*) Ե. Լալայեանի—Փանձակի գաւառ, բ. հատ. եր. 21: Վարանդա, եր. 127: Սիւխան, եր. 116, և այլն:

նութիւնից, գերդաստանի դիֆերենցիացեայով սերնդական նահապետի, նախաօր սիւզերէն սկզբունքը նոր ընտանիքները զոնէ de nomine վերապահել էին որոշ և յատուկ անձերին և ժամանակներին ընթացքում այդ սկզբունքը վերածուել է մի անգիտակցական ծէսի, արտաքին մի սովորութեան: Քաւորի անձնաւորութեան մէջ կարծես պահպանում էին այդ սիւզերէն իրաւունքը, սերնդական նահապետի, աւագի պատիւն ու յարգանքը, որ յիշուի դա այդպէս է, առիթ են տալիս եզրակացնելու հետեւեալ փաստերը:

Դարաւազեազում հարսնացուի խմբի հետ իր գիւղից փեսացուի գիւղը եկած հարսը սովորութեան համաձայն կանխապէս պիտի մտնէ ու իջնէ քաւորի տունը, ուր մնում է մինչև եկեղեցի դնալը պսակադրութեան համար: ¹⁾ Սիսիանում, երբ ծաղկոցում աղջիկները աւարտում են հարսին հանդերձներ հագցնելը, ներս են հրաւիրում քաւորին, որ հարսի գօտին կապէ: Սա նւէր տալով հարսի շորերը հագցնողներին, վերցնում է գօտին, փաթաթում և երեք անգամ հարսի գլխով ձգում և սպա դետնից վերցնում, ասելով. «Աստուած տայ տղաբեր սնամէր ինես, ոտակալութիւնը խէր ընի» և յետոյ կապում նրա մէջքին: ²⁾ Նոյնն է տեղի ունենում նաև Ախալցխայի գաւառում ³⁾, Հին Զուղայում ու Հին-Նախիջևանում ⁴⁾: Գօտին նորահարսի վրայ, ինչպէս յայտնի է, սիմբօլիկ ձևով նշանակում է կուսութիւն: Հետեւապէս վերոյիշեալ ծէսի մէջ քաւորը ձևականօրէն կարծես արտայայտում է երբեմն զոյնութիւն ունեցող նրա սեփական իրաւունքը հարսի կուսութեան վրայ: Նոյն այդ գտղափարն է պարունակում Վարանդայում տիրող այն սովորութիւնը, որ երբ հարսն ու փեսան առաջին գիշերը մտնում են առագաստ, քաւորը թագնւում է նրանց տան կտրան: ⁵⁾ Վերջապէս աւելի ցայտուն այդ զաղափարը պարփակւում է այն սովորոյթի մէջ, որի մասին արդէն յիշել ենք: Զաւախքում գիշերը հարսը զնում, հանկեցնում է քաւորին ու պարկեցնում, իսկ ինքը գալիս է և հարսնեղբոր հետ է

¹⁾ Քաջբերունի-Ճանապարհորդական նկատողութիւնք. Փորձ, 1881. № IV.

²⁾ Ե. Լալայեան—Սիսիան, եր. 120.

³⁾ «Этнографическое Обзоръіе», 1889. № 1 Свадебные обычаи Ахалцыхск. армянъ.

⁴⁾ Քաջբերունի-Հայկական սովորութիւններ, «Ազգագրական հանդէս». հատորներ VII և VIII, եր. 176—177.

⁵⁾ Ե. Լալայեան—Վարանդա, եր. 142.

պատկում. իսկ փեսան գնում, մտնում է քաւորի ծոցը: Շիրակի մի քանի գիւղերում, ինչպէս երևում է մեր անձնական հաւաքած տեղեկութիւններից, յիշաւի առաջին գիշերը հարսը պատկում է քաւորի հետ:

Վերոյ բերեալ փաստերից պարզ հետևում է այն գաղափարը, որ պարզակալած է յիշեալ սովորոյթների մէջ, թէ հարսի կուսութիւնը խախտելու է և առաջին գիշերը հարսին տիրանալու է ոչ թէ փեսան, այլ քաւորը: Ուրեմն քաւորը, որի անձնաւորութեան մէջ տեսնելու ենք սերնդական աւագի, սերնդական նահապետի իշխանութեան կաղապարումն, ունի որոշ իրաւունքներ հարսնացուի կուսութեան վերաբերմամբ: Արդեօք վերոյիշեալ ծէսերում նկատելի չէ՞ն, թէ և թոյլ նշմարելի, հետքեր այսպէս անուանուած *ius primae noctis*—առաջին գիշերուայ իրաւունքը: Այդ *ius primae noctis*-ի սովորոյթը, ինչպէս ցոյց են տալիս հետազոտութիւնները, խիստ ընդհանրացած է եղել զանազան ցեղերի մէջ և նոյն իսկ ծագելում էր միջնադարեան Ֆէօդալական իրաւունքում: Ֆէօդալ իշխանները իրենց անձնական իրաւունք էին համարում որ ստորագրեալ ճորտերի ամուսնութեան դէպքերում առաջին գիշերը իրենք էին օգտուելու նրանց նորահարսով կամ իրենք էին խախտելու նրանց նորատի կնոջ կուսութիւնը: *ius primae noctis* մի յատուկ սեփականութիւն, բնորոշ պատկանելի իրաւունք էր, որով օգտուում էին ցեղապետները՝ սերնդական նահապետները. դա մի մնացորդ էր հին ժամանակներում գոյութիւն ունեցող ամուսնական խառնակեցական ձևերի և սրանց այլափոխուած սահմանափակումների ըստ անձերի:

X

Արդէն քանիցս շեշտել էինք, որ մայրական իրաւունքի ընտանեկան մթնոլորտում խմբակցական ամուսնական յարաբերութիւնները ժամանակների ընթացքում սահմանափակուում են յօգուտ որոշ անձնաւորութիւնների՝ ցեղապետների ու սերնդական նահապետների: Այդ յարաբերութիւններն էլ ըստ իրենց կարգի շարունակում են հետզհետէ սահմանափակուել ու կրճատուել: Աստիճանօրէն նեղանում է այն շրջագիծը, որտեղ պահպանում էին այդ ամուսնական խմբակցական յարաբերութիւնները. մի շրջանագիծ, ուր մի ժամանակ բոլոր այդ մարդկանց պատկանած իրաւունքը՝ ամուսնական կապեր ունենալ խմբակցութեան մէջ մտնող բոլոր կանանց հետ՝ յետագայում միայն վերապաւում էր կին բերող ամուսնու մօտիկ ազգականներին թէ վերընթաց և

Թէ կողմնակի դժերով, այսինքն այն ազգականներէ, որոնք ապրում են մի յարկի տակ, միևնոյն պատերի մէջ: Դոքա կարող էին լինել ամուսնու հայրը, հօրեղբայրները, եղբայրները, հօրեղբոր որդիները: Այսպիսով ամուսնական ձևերի մէջ առաջ էր գալիս այն հիմնարկութիւնը, որը յայտնի է պօլեանդրի, բազմայրութիւն անունով:

Բազմայրութիւնը, որ գոյութիւն ունի նոյն իսկներկայումս մի քանի վայրերի ցեղերի մէջ, արտայայտուում է բազմակողմանի ու տարբեր ձևերով, որոնց տեսութեան վրայ այստեղ կանգ չենք առնում: Միայն շեշտենք, որ այս ձևերի մէջ պէտք է տարբերել երկու առանձնայատուկ տեսակի խմբակցական բազմայրական ամուսնութիւններ: Մէկը՝ երբ եղբայրները կամ այլ մօտիկ ազգակիցները ապրում են մի կնոջ հետ և միևսը՝ երբ հարսի հետ ամուսնական կապերի մէջ մտնելու իրաւունք է համարում, բացի ամուսնուց, նաև սրա հայրը կամ աւագագոյն ազգականը: Այդ բազմայրական ամուսնական ձևը արտայայտուում է իւր մնացորդներով հայ ժողովրդի արդի մի քանի սովորոյթների մէջ:

Կանգ առնենք բազմայրական ամուսնական կապերի այն ձևի վրայ, ուր փեսայի հայրը սեռական կենսկցութիւն է ունենում իր հարսի հետ: Յիշատի, հայ ժողովրդական իրաւական հայեացքներում երբեմն իշխել է այն գաղափարը, թէ հայրը իրաւունք ունի տիրանալու իր որդու կնոջ, իբրև մի մնացորդ այն ժամանակից, երբ հայր և որդի միաժամանակ կարող էին ամուսիններ համարուել միևնոյն կնոջ: Այդ տեսակ հայեացքի մասին մենք ի հարկէ ձեռքի տակ չունինք ուղղակի ապացոյց—փաստեր. սակայն դրա փոխարէն ունենք բազմաթիւ այնպիսի սովորութիւններ, որոնց վերլուծման վրայ հիմնուելով, կարող ենք հետևեցնել, թէ հայ ժողովրդի մէջ իսկապէս տիրել են շատ խոր հնում այդ տեսակ իրաւական գաղափարներ: Այդ սովորոյթների մէջ ամենաբնորոշն, որոնցով արտայայտուում է հօր իրաւունքը իր հարսին տիրանալու նկատմամբ, կայանում է հարսի կողմից սկեսրայրի ոտքեր լանալը հարսանիքի ժամանակ, իսկ միւս այր մարդկանց տնեցիների ոտքեր լուանալն էլ ցոյց է տալիս, որ հարսը նմանապէս, բացի իր իսկական ամուսնուց, համարուում է նաև կին միւսների՝ իր տաղերի:

Գողթան գաւառում պսակադրութեան, գլխաւորապէս առագաստի գիշերից 3—4 օր յետոյ շնորահարսը ջուր է տաքացնում և լուանում սկեսրայրի, սկեսրոջ ու տէգրների ոտները, սկսելով միշտ աջ ոտից: Դւրաքանչիւրի ոտը լուանալուց յետոյ խռնւրհ-

ւում էր և համբուրում կամ ձեացնում էր: Թէ համբուրում»¹⁾։ Նոր-Բայազէտի զաւառումն էլ «պսակից 3—4 օր անցնելուց յետոյ հարսը ջուր է տաքացնում և լուանում սկեսրայրի և տէգրնների զլուխները ու ոտները»²⁾։ Նոյնն է կատարւում Վարանդայում³⁾։ Միսիանում⁴⁾։ Վանայ մէջ առաջաստի «հետեալ առաւօտ հարսը ամենից վաղ վեր կենում և դնում է սկեսրայրի զգետները հազցնում, ձեռքին ջուր լեցնում, որ լուացուի և իր բերած երեսրբիչը ձեռքին գցում։ Կեսրայրն այստեղ մի ոսկի է տալիս»⁵⁾։ Նմանապէս էլ Նիժում նորահարսը իր առաջի ամուսնական գիշերից յետոյ միւս օրը ջուր է տաքացնում և տան մեծ ու փոքրերի ոտները լուանում ու համբուրում⁶⁾։ Սակայն աւելի ընդոռն է հարսի կողմից ոտք լուանալու պարտաւորութիւնը Բաշ-Շորագեալի շրջանում։ «Նշանադրութիւնից յետոյ ընթացս ամբողջ ժամանակի մինչև պսակադրութիւնը տղատէրը յաճախ այցելում է հարսնացուին և «տեսը» ամեն անգամ, մանաւանդ երբ հարսնացուն օտար գիւղից է, զէթ առանց մի շիշ օղու չի կարող լինել։ Ամեն անգամ հարսը այս այցելութիւններին պարտաւոր է լուանալ նրա ոտքերը, իսկ սա վճարում է նրան 50 կոպ. մինչև 12 բուրլի»⁷⁾։

Այս բոլոր փաստերի մէջ ամենահետաքրքիր գիծն այն է, որ ոտք լուանալու ծէսը ինքնըստինքեան սիմբոլական ձևով ցոյց է տալիս կնոջ պատկանելիութիւնը այր մարդուն, նրա հետ սեռական յարաբերութիւն ունենալու պարտականութիւնը։ Մանաւանդ այստեղ աչք է զառնում այն, որ հարսը լուանում է սկեսրայրի և իր տէգրնների ոտքերը իսկոյն առաջաստից վերկենալով, հէնց իւր ամուսնութեան առաջին առաւօտու Հետեալէս այս սովորոյթների մէջ պարփակուած է այն գաղափարը, թէ հարսը ոչ միայն իր մարդուն է պատկանում, որի հետ մի փոքր առաջ առաջաստի մէջ էր, այլ և պատկանում է նրա հօրը, եղբայրներին։ Իսկ Բաշ-Շորագեալի հարսի կողմից իր ապագայ սկեսրայրի ոտք լուանալու ծէսը աւելի հեռուն է տանում։ այդտեղ հարսին տիրապետելու հօր իրաւունքի գաղափարը արտայայտւում է այնպէս,

¹⁾ Ե. Լալայեան—«Ազգագրակ. հանդէս», հատ. XII, եր. 134.

²⁾ Ե. Լալայեան—«Ազգագրակ. հանդ.» հատ. XVI, եր. 29.

³⁾ Ե. Լալայեան—Վարանդա, եր. 143.

⁴⁾ Ե. Լալայեան—Միսիան, եր. 126.

⁵⁾ Արձագանք, 1897, № 27.

⁶⁾ Արձագանք, 1894, № 19—Նիժի սովորութիւններից։

⁷⁾ Նոր-Դար, 1895, № 213.

որ նոյն իսկ նշանադրութիւնից յետոյ հարսը արդէն համարուում էր սկեսրայրի սեփականութիւն:

Սկեսրայրի իրաւունքը հարսի վերաբերմամբ նկատելի է նաև ուրիշ սովորութիւնների մէջ: Ընդհանրապէս հարսնառ զնալիս կամ հարսը հօրանց տանից պսակադրութեան դուրս բերելիս դէպի եկեղեցի, հարսնացուին ընդունում է և ձեռքից բռնում է նախ ոչ թէ փեսան, այլ սրա հայրը, և ապա յանձնում է իր որդուն¹⁾, Բուլանըխում երբ հարսը կըմեկնի հայրենական օջախից իր փեսայի և սրա հօր ուղեկցութեամբ, «և ինչ սկեսրայրը զրսու դռան շէմը կըփոխէ՝ հարսի եղբայրներից մէկը դռան կշտին կանգնած ձեռք կըձգէ խնամու օձիքը և կը պահանջէ աղբօր գօտին, որ ընդունուած սովորութեան համաձայն անպատճառ կը տրուի»²⁾: Վարանդայում, երբ հարս և փեսան հարսնջաւորների հետ գալիս են եկեղեցու պսակադրութիւնից տղայի տուն, հարսը դռան մօտ կանգ է առնում ու ջնայած թախանձագին խնդիրներին՝ կեղծօրէն ընդգիմադրում է փեսայի տուն մտնելու, մինչև որ կեսրայրը գալիս է և մի ընծայ է խօստանում³⁾: Վերջապէս չմոռանանք յիշել և այն նշանաւոր փաստը, որի մասին արդէն խօսել ենք, այսինքն, որ հարսը մինչև իր մահը իրաւունք չունի խօսելու իր սկեսրայրի հետ: Կայ նաև մի այլ ծէս, որտեղ վերստին փեսայի հօր իրաւունքները հարսին տիրանալու վերաբերեալ այլաբանական իմաստով են արտայայտուում: Զաւախքում տեղի է ունենում այսպէս անուանած «պղտիկ հարսնացու»: Երբ աղջկայ տիրոջ համաձայնութիւնը ստացւում է, կատարում են մասնաւոր նշանադրութիւն, որ միանգամայն քաղաքացիական բնաւորութիւն է կրում: «Աղջկայ տանը, երկու խնամիները համբուրում են. փեսան դաւուլ զուռնայի առաջնորդութեամբ առաջ է բերում հարսնացուին: Սրանք կարգով համբուրում են բոլորի ձեռքերը և ապա հարսնացուն կանգնում է իր սկեսրայրի մօտ բարև բռնած՝ ձեռքերը կրծքին և դիւին քօղ գցած: Ընթրիքից յետոյ բոլոր ներկայ եղողները, նաև փեսան, ցրւում են իրենց տները: Միայն տղի ճայրը, որպէս պատուաւոր հիւր, այդ գիշեր մնում է խնամու տանը»⁴⁾:

Վերոյիշեալ սովորութիւններն ուրեմն ֆեոդոզներ են նախնական ժամանակների կարգերից, երբ հայրը որոշ իրաւունքներ ունէր իր զաւակների կանանց վրայ, կարող էր սեռական յարա-

1) Ե. Լալայեանի Գանձակի գաւառ, ք. հատ. հր. 31. Զաւախք, հր. 141, Սիսիան, 123

2) Բէնեւ-Բուլանըխ, հր. 105.

3) Ե. Լալայեան—Վարանդա, հր. 140.

4) Ե. Լալայեան. Զաւախք, հր. 125.

բերութիւնների մէջ մտնել վերջինների հետ: Այդ տեսակամուսնական կապերի իրական գոյութիւնը արդէն վաղուց մեռած, վերացուած է, բայց մնացել է միայն արտաքին ձևը, որ արտայայտուած է անգիտակցօրէն կատարուող ծէսերով, դրական իրաւարանական նշանակութիւնը կորցրած սովորոյթներով: Որ յիշուի հայրական այդ տեսակ իրաւունքները որդու կնոջ տիրանալու նկատմամբ գոյութիւն ունէին հայ իրաւարանական սովորոյթների մէջ և որ այդ իրաւունքները մեծ նախերգով էին տարածուած ու խոր հնութիւն էին ներկայացնում, դա բացայայտ է հայ պատմութիւնից:

Եսահայիվանի եկեղեցական ժողովը (447 թ.) ի միջի այլոց յատուկ կանոն էր սահմանել, որով արգելում էր և խիստ պատիժ էր սահմանում, «եթէ հայր զորդոյ կին ունիցի»¹⁾: Այս արգելական կանոնն ապացոյց է, որ հին Հայաստանում տեղի էին ունենում հօր և հարսի ամուսնութիւններ. իսկ այդ տեսակ ամուսնութիւնների հասկացողութիւնն ու հնարաւորութիւնը ժողովրդի իրաւական հայեացքներում այն ժամանակ միայն կարող էին դարգանալ և հիմք գտնել, եթէ իրականութեան մէջ ժողովրդի բարոյական գիտակցութիւնը չէր դատապարտում հօր և հարսի սեռական յարաբերութիւնները, փոխադարձ մարմնական մերձեցումն, որը մի սովորական երևոյթ էր սեպելու, տիրապետող մի սովորոյթ նաև որդու կենդանութեան ժամանակ: Այս մեր ենթադրութիւնն աւելի հաւանականութիւն է ստանում նոյն կանոնի վերջում յիշած մի այլ արգելական նորմի շնորհիւ. «այլ ջերմ հարազատի և զազգականի զկին ոք մի իշխեսցէ ունել ի կնութիւն և կամ շնալ»²⁾: Պարզ է, որ իր ամենամերձաւոր ազգականի կնոջ հետ ամուսնանալու հնարաւորութեան հասկացողութիւնը անշուշտ առաջադրում է մի զաղափար, թէ հնարաւոր է ուրեմն և շնանալ, այսինքն ազատ սեռական յարաբերութիւններ ունենալ նրա հետ: Թէ մեր պատմական կեանքում ընտանիքի բաղկացուցիչ անդամների փոխադարձ սեռական յարաբերութիւնները միանգամայն չէին համապատասխանում քրիստոնէական էթիկային և խառնակեաց բնաւորութիւն էին կրում, դա երևում է և ուրիշ մեր հին կանոնական նորմերից, որոնք այդ տեսակ յարաբերութիւնները յիշատակելով, որոշ պատիժներ էին սահմանում:

1) և 2) Հայոց եկեղեցական իրաւունքը՝ Ն. Վ. Մելիք-Թանգեանի. Ա. հատ. եր. 348.

XI

Արդեօք պահպանուել են մինչև վերջին ժամանակները, քանի հայ իրականութեան մէջ տակաւին կանգուն էր նահապետական գերդաստանը, որն է մնացորդներ այն յարաբերութիւնների, որոնք բնորոշէին սկեսրայրի հարսին տիրանալու սովորոյթը, այն է նուսիւնը¹⁾ (спохачество)։ Հայ նահապետական գերդաստանը իր ներքին ինտիմ կեանքով եղել է մեր բանահաւաքների համար մի խորհրդաւոր սփինքս։ Մնալիսի երևոյթներ, որպիսին է նուսթիւնը, երբ գերդաստանի սահմաններում տեղի են ունենում արդի բարոյական-կրօնական հայեացքներով մեղք համարւող, իսկ տիրող պետական օրէնսդրական սկզբունքներով պատժելի սեպուղ խառնակեաց ամուսնական յարաբերութիւններ, ակնհերե է, որ երբէք արտաքս չեն երևալ գերդաստանի խորքերից, նրա խորհրդաւոր մութ անկիւններից։ Եւ վերջապէս հնարաւորութիւն կամ արդեօք այդ տեսակ յարաբերութիւնների գոյութեան մասին որն է տեղեկութիւն քաղել։ Անկասկած, այդ մարդիկ, իբրև շահագրգռւած ու պատասխանատու օրէնքի ու բարոյականութեան առաջ, ամենայն կերպ պիտի ծածկէին, իսկ կանայք, նախ՝ իրենց չիտականութեամբ դատապարտուած էին յաւիտեանական լուսութեան, իսկ միւս կողմից՝ «ամօթի» ու «նամուսի» ճնշման ներքոյ նմանապէս պիտի պապանձուէին օտարների առաջ։ Ահա թէ ինչու մեր ազգագրական նիւթերի մէջ այդ հետաքրքիր հարցի մասին ոչ մի տեղեկութիւն, ոչ մի իրական փաստ չեն գտած մեր բանահաւաքները և չեն էլ դանի, եթէ չգիմեն կողմնակի միջոցների։

Նուսթիւնը իբրև բազմայրութեան, ուրեմն և մայրական իրաւունքի շրջանի խմբակցական ամուսնական յարաբերութիւնների մի մնացորդ, այնպէս գիւրին ու արագ չէր վերանայ հասարակական-ընտանեկան բարքից։ Պատրիարխատական՝ հայր-իշխանական՝ գերդաստանը, յաջորդելով մայրական իրաւունքի ընտանեկան կազմին, իր մէջ պարփակում էր այնպիսի սօցիալ-իրաւական տարրեր, որ նուսթիւնը անշուշտ պիտի հող դառնէր իր կայունութեան համար, պիտի պահպանուէր գերդաստանի

¹⁾ Այստեղ աւելի յարմար գտանք «նուսթիւն» քան թէ «հարսնութիւն» բառը գործածել, տալով նրան տեխնիկական տերմինի նշանակութիւն, ռուսական спохачество-ին հոմանիշ. այսինքն «նուսթիւն» տակով, հասկանալու ենք որոշ ժողովրդների մէջ տիրապետող այն սովորութիւնը, որով սկեսրայրը կամ տագրը սեռական յարաբերութիւնների մէջ է մտնում իր հարսների հետ։

գաղտնիքներում, նրա ընտանեկան անդամների փոխադարձ սեռական յարաբերությունների մթնոլորտում, որ անտեսանելի էր ու ծածկուած արտաքին աշխարհից: Կկատի տանելով այն իրական-անտեսական դիրքը, որ բռնում է գերդաստանի հայրը կամ նահապետը իր տան մէջ, կարելի է դիւրին եզրակացնել, թէ նրա քաջարձակ իշխանութիւնը, որ տարածւում է գերդաստանի բոլոր անդամների վրայ, ևս առաւել ազդեցիկ պիտի լինի երկր-տասարդ հարսերի վրայ: Այդ չխօսկան, լուռ և մունջ արարած-ները, որոնք ոչ մի իրաւունք չունեն ձայն ծպտուն հանելու տղամարդկանց և մանաւանդ իրենց սկեսրայրի առաջ և որոնք ոչ մի իրաւունք չունեն իրենց անձնական վերաբերեալ որևէ բան ձեռնարկել կամ պաշտպանել, ամենայն դիւրութեամբ ենթակայ են լինում նահապետի կամայականութիւններին ու ստիպուած են կրելու, համբերութեամբ համաձայնուելու այն բոլորին, ինչ որ պահանջում է նրանցից, կամ ստիպում անելու գերդաստանի նահապետը: Հարսը, եթէ կամենայ էլ, հնարաւորութիւն չունի բողոքելու: Նրան շահադրդոածները կըպապանձեցնեն, որպէսզի գամօթի՝ ու ճնամուսի՝ սկզբունքը պաշտպանեն ամեն կերպ:

Հայ նահապետական գերդաստանում տիրող բարքերն ու սովորութիւններն ուսումնասիրելիս կարող ենք հանդիպել փաստերի, որոնք հիմք են տալիս հաւանական ենթադրութիւններ անելու, որ նութիւնը տիրում էր նահապետական գերդաստանում մինչև վերջին ժամանակները: 80—90-ական թուականների մեր պարբերական մամուլի էջերում այս ու այն գաւառական թղթակցութեան մէջ սպրտում էին երբեմն տեղեկութիւններ ու փաստեր ժողովրդի ընտանեկան-ամուսնական բարքերի անկման ու այլասեռման մասին: Միամիտ, անփորձ թղթակիցները կարծում էին, որ այդ արտասովոր թուացող բարքերը, իրենց բարոյական հայեացքներին չհամապատասխանելով, անկման և նոր ժամանակի բացասական ազդեցութեան հետեւեցներ են: Մինչդեռ այդ նրանց արձանագրած փաստերը միայն դիպուածով են լոյս աշխարհ գութու եկել գերդաստանի խաւար անկիւններից, ուր դարերով ալետր հնութիւնից մնացել, պահուել էին հետաքրքրելի աչքերից հեռու...

Անվիճելի փաստ է, որ հայ իրականութեան մէջ ինչ մեծ ծաւալումն է ստացած անչափահաս ամուսնութեան սովորութիւնները: Մոռոնները, գլխաւորապէս գերդաստանի նահապետը, յենուելով իր քաջարձակ իշխանութեան վրայ, անձամբ էր տնօրինում իր որդիների բազդը: Սովորական երեւոյթ էր, որ իր մանկահասակ 10—12 տարեկան տղային ամուսնացնում էր արբունքի

հասած օրիորդի հետ: *) Այս հանգամանքներում գերդաստաննների հայրերը և ընդհանրապէս հայ գիւղացիները պատճառաբանելով փորձում են արդարանալ. որ իրենց ընտանիքի համար անհրաժեշտ է ու մեծ կարիք է զգացւում աշխատաւոր ձեռքերի, բանուոր ուժերի, սրանք նրանք ձեռք են բերում յանձին նորահարսի: Բայց իրականութեան մէջ կատարւում է միանգամայն այլ բան: Յիշուի հարսը աշխատում, ծառայում է գերդաստանին իբրև բանուոր ոյժ, բայց նա անկարող է միանգամայն կնութիւն անել իր մանկահասակ և անուժ ամուսնուն: Ուստի հարսը ստիպուած է լինում սկեսրայրի իշխանութեանը հպատակուելով, անձնատուր լինել նրան. հակառակ դէպքում հարսը զզոււ է, որ նահապետը, օժտուած լինելով անսահման իրաւունքներով գերդաստանի սահմաններում, պիտի անխնայ հալածանքների ենթարկի իրեն և մի դժոխային, անտանելի կեանքի զոհ դարձնի: Գոյութեան ու կենսական ապահովութեան և մասամբ էլ իր բնական մարմնական պահանջներն էլ միւս կողմից նկատի առնելով, որոնց անկարող է բաւարարութիւն տալ իր մանկահասակ ամուսնինը, հարսը լռելեայն հաշտւում է իր վիճակի հետ: Այսպիսի մի քանի փաստերի մասին տեղեկութիւններ կան ցրուած հայ պարբերական մամուլի էջերում: Այդ տեսակէտից խիստ հետաքրքիր է մի փաստ Կաղզուանի հայերի բարձրից: Զուրկ գիւղում Շողեր անունով մի կին 10 տարի իր ամուսնու մօտ ապրելուց յետոյ փախչում է: Շողերին ամուսնացրել էին մի անչափահաս ու անզարգացած տղայի հետ, որի հայրը յենուելով իր իշխանութեան վրայ, ամբողջ 10 տարի սեռական յարաբերութիւն էր պահպանում իր հարսի հետ թէ որդու և թէ իր կնոջ (հարսի սկեսրոջ) գիտութեամբ: Հարսը այլ ևս անկարող լինելով իր այդ դրութիւնը տանելու, բամբակ, շամուրը մի կողմ թողած, փախչում և ապաւինում է իր ազգականներին: Սակայն ժողովուրդը, նրա համագիւղացիները, որոնցից իւրաքանչիւրն երևի ինքն էլ նոյն տեսակ բաներ է կատարում, սովորական են սեպել այդ երևոյթը ու դաւառական իշխանութեան առաջ սուտ և հնարովի են հռչակում Շողերի ասածները, առ ոչինչ համարելով նրա ամուսնական իրաւունքները. ընդհակառակն նրանք պաշտպան են հանդիսանում նրա սկեսրայրի ու անընդունակ ամուսնուն և ծեծով, ոյժով տանում, նստեցնում են Շողերին վերստին այն տանը, որտեղից նա փախել էր: **)

*) Տես. Նոր-Ղար, 1899 թ. № 50—Ապարանը և իր բնակիչները:

**) Նոր-Ղար, 1885 թ. № 20:

Ահա թէ ինչով մասամբ կարելի է բացատրել այն երևոյթը, որ այնպէս համատարած է ու զարգացած հայ ժողովրդական սովորութիւններում, այն է մանկահասակ ու անզարգացած տղաների ամուսնութիւնները արփուներէ հասած ու Ֆիզիկապէս արդէն զարգացած աղջիկների հետ: Ծիշտ է, մտաւոր-բարոյական զարգացումն իր որոշ ազդեցութիւնն այնուամենայնիւ ունեցել է հայ ժողովրդի բարքերի վրայ: Պատահում են ժողովրդի մէջ նաև հայեացքներ, որոնք այդպիսի սեռական յարաբերութիւնները մեղք ու յանցանք են համարում, ճշուութեան մէջ սկսում են տեսնել անբարոյականութիւն, պոռնկութիւն: Սակայն նոյն ժողովուրդը իր ստուար մեծամասնութեամբ այնքան էլ մեծ և լուրջ յանցանքների շարքին չի դասում: Դա բացատրելի է այն ներդասիտ ու համեմատաբար չնչին պատիժներից, որոնցով ժողովրդական կամ գիւղական դատաստանը վերաբերում է դէպի այդ տեսակի դէպքերը:

Զարմանալի չէ, երբ ասենք, որ գրեթէ նոյնութեամբ տեղի են ունենում նուութեան դէպքեր ու օրինակներ ողտաւական գիւղական կեանքում: Ռուսաստանում կան գաւառներ, ինչպէս Դոնի շրջանը, Արխանգելսկի, Մոլոտոսիայում, Սիբիրի մի քանի շրջաններում նուութիւնը (снохачество) թազաւորում է բացայայտ կերպով և գիւղական կեանքում այն աստիճանի սովորական ու բնական երևոյթ է սեպւում, որ ոչ մի հալածանքի կամ դատաւիտութեան չի ենթարկւում:

Ռուսաստանի այդ համատարած սովորութեան մասին ժողոված կան բազմաթիւ նիւթեր թէ բանահաւաքների և թէ պաշտօնական-վարչական քննութիւնների կողմից: մի փաստ, որի վրայ ընդհակառակն շատ նուազ ուշադրութիւն է դարձուած եղել հայ գրականութեան ու բանահաւաքութեան մէջ:

XII

Անչափահաս ամուսնութեան երևոյթը ճշուութեան տեսակէտից ունենում է նաև ուրիշ հետեւանքներ, որոնք նոյնպէս բնորոշ են ներկայ արծարծուած նիւթի նկատմամբ:

Բնական է, որ, անչափահաս փեսան, երբ մեծանայ ու Ֆիզիկապէս զարգանայ, իւր կինը այլ ևս թառամած ու հասակն առած է լինելու: Այն ժամանակ էլ սա իւր կողմից և իւր կարգին փորձում է սեռական յարաբերութիւնների մէջ մտնել իր

տան որևէ ուրիշ, գլխաւորապէս կրօններ անդամներ, զորօրինակ փոքր եղբօր Զահել կնոջ հետ: Այսպիսով գերդաստանի մէջ լռիկայն տիրում են սովորութիւններ, որոնց համակերպում են ընտանիքի անդամները. սրանց համար այդ տեսակ սեռական խառնակեցական յարաբերութիւնը բնական երևոյթներ, թոյլատրելի բարձրի շարքին են դասուում: Այս հանգամանքներում արդէն իհարկէ զարգանալու պարարտ հող ունին խառնակեցական այն ձևերը, որոնք գոյանում են գլխաւորապէս տէգրների ու սրանց հարսերի միջև: Այս խառնակեցութիւնը բազմալրութեան այն մնացորդն է, որով եղբայրները ամուսնանում են մի կնոջ հետ, կամ իրաւունք են համարում տիրանալու իրենց եղբօր կնոջ վրայ: Վերջին երևոյթը ժողովրդական իրաւարանական սովորոյթներ, մէջ երկու տեսակ է լինում: Առաջինը՝ երբ եղբայրները ընդհանրապէս իրաւունք են համարում տիրանալու հարսերին իրենց եղբօր կենդանութեան ժամանակ. երկրորդ՝ Լեւիտաի սիստեմն է, երբ այրին պարտաւոր է կենակցելու կամ ամուսնանալու հանգուցեալի ամենամօտիկ ազգականի և ամենից առաջ ամուսնու եղբօր հետ (levir):

Առաջին տեսակի խառնակեցութեան մասին՝ այն է եղբայրների իրենց հարսի հետ ունեցած խառնակ սեռական յարաբերութիւնների՝ մեր ազգագրական նիւթերի մէջ մինչև ցարդ գրեթէ ոչ մի իրական փաստ չի ժողովուած: Այդ նիւթերի բացակայութեան պատճառն նոյնն է, ինչ որ արդէն ասել ենք նուութեան՝ սկեսրայրի հարսի հետ ունեցած խառնակեցութեան մասին: Սակայն այստեղ էլ կարելի է հաւանական ենթադրութիւններ անել, հիմնուելով ընտանեկան-ժողովրդական բարձրի առանձնայատուկ գծերի վրայ:

Ամուսնու եղբայրների ընտանեկան յարաբերութիւնները դէպի նրա կինը խիստ բնորոշ գոյն էին կրում մինչև վերջին ժամանակները հայ նահապետական գերդաստանում: Ինչպէս յայտնի է, հարսները պարտաւոր են մինչև իրենց կեանքի վերջը բնաւ չխօսել չափահաս տէգրների հետ և միւս կողմից յայտնի է մանաւանդ այն թշնամական փոխադարձ վերաբերմունքը՝ որ ունեն տէգրկիները դէպ իրար և թէ դէպի նորահարսը: Նահապետական գերդաստանի անդամների այդ փոխադարձ յարաբերութիւնները խիստ բնորոշ գծերով արձագանք է գտել այն համատարած ժողովրդական երգում, ուր չափուում է գերդաստանի անդամների վերաբերմունքը դէպի նորահարսը.

Կեսրար, կեսրար,

Երկթէ մամար,

Կեսուր, կեսուր,
 Քարէ մսուր.
 Տաքէր կնիկ,
 Օձի բնիկ,
 Տալիկ, տալիկ,
 Սև սև սալիկ.
 Տաքրիկ, տաքրիկ,
 Պաղ, պաղ աղբրիկ,
 Պուտ մը ջրիկ:

Ուրեմն հարսի ամենասիրելին տէգըն է. սա է նրա միակ ուրախութիւնն, որը միշտ նրան բաւականութիւն է պատճառում և տանելի դարձնում նրա աննախանձելի դրութիւնը գերդաստանի կեանքում: Մշոյ դաւառում սովորութեան համաձայն հարսը չպէտք է խօսի տէքեր հետ, բայց գաղտնի երբեմն խօսում է և իր բոլոր ցաւերը թափելով նրա առաջ՝ մխիթարութիւն և սփոփանք է գտնում նրանից, որպէս պաղ-պաղ աղբրի ջրից: *) Միւս կողմից էլ տէգրիկինն է նրա թշնամիներից, տանջողներից մէկը. չէ՞ որ դա բղխում է այն խանդից, այն սեռական նախանձից, որ բնականօրէն պիտի գոյանայ տէգր-կանանց մէջ, երբ սրանք զգում են ու բնազդօրէն դիտեն, թէ ինչ են իրենց ամուսինները նորահարսի վերաբերմամբ:

Այսպիսի բացառիկ վերաբերմունք հարսի ու տէգրիկների միջև մնացորդ է այն հայեացքների ու սովորութիւնների, որոնք երբեմն իրօք տիրապետել են հայ նահապետական գերդաստանում, այսինքն խառնակեաց ամուսնական յարաբերութիւնները հարսի և սրա ամուսնու եղբայրների միջև: Ներկայ ընտանեկան կեանքում տէգրը զուցէ այլ ևս նախնական ակնոր ժամանակների իրաւունքները չունի, որ կարողանար անխտիր կենակցել ու սեռական խառնակ յարաբերութիւնների մէջ մտնելիւ հարսների հետ, ուրեմն և տէգրիկինն էլ առիթ չունէր սեռական խանդից ստիպուած թշնամական դիրք բռնելու դէպի հարսը, սակայն և այնպէս շուտով չեն ջնջւում ժողովրդի մտաւոր-բարոյական աշխարհից նրա մէջ երբեմն տիրապետող սովորութիւնների ու բարքերի ազդեցութիւնները, որոնց հետքերը թեթև, հազիւ նշմարելի, աղօտ գծերով այնուամիսայնիւ պահպանւում են երկար ու ձիգ դարերով: Անշուշտ արդի նահապետական գերդաստաններում էլ, ինչպէս արդէն վերը քանիցս յիշել ենք, տեղի էին ունենում թէ

*) Մշեցոց ընտանեկան կեանքից մի քանի գծեր—Շնոր-Պարս, 1896 թ. № 187. Ե. Լ. Զաւախքի բուրմունք:

եղբայրներին և թէ մանաւանդ ստէպ հօր սեռական յարաբերութիւնները երիտասարդ հարսերի, և ընտանիքի սահմաններում գոյութիւն տալիս խառնակեաց ամուսնական երևոյթներին, այնուամենայնիւ ժողովրդի աշխարհայեացքի մէջ արդէն հիմք է դրել այն սկզբունքը, որ այդ տեսակ երևոյթները մասամբ սեպւում են անբարոյական, յանցաւոր: Դա ակնյայտնի է նրանից, որ այդ տեսակ սեռական յարաբերութիւններից, նոյն իսկ նահապետի կողմից իրեն անձնատուր չեղող հարսի վերաբերմամբ սկսած հալածանքից բղխում են գժտութիւններ, անհամութիւններ, խանգի բռնկումներ, որոնք սովորաբար յանգում են կոիւնների, թշնամութիւնների և ի վերջոյ անոթ են տալիս գերդաստանների կազմալուծման, բաժանման: Այժմ տեսակ առիթներից ծագող գերդաստանական բաժանումները բաւականի բազմաթիւ են մեր գաւառական իրականութեան մէջ և այդ նկատմամբ նոյն իսկ կան բաւականաչափ փաստեր մեր ազգագրական բանահաւաքութեան մէջ, որ աւելորդ ենք համարում այստեղ մի առ մի առաջ բերելու:

Այն փաստը, որ երբեմն հայ սովորութեան իրաւունքի մէջ գոյութիւն է ունեցել փեսայի եղբայրների խառնակեցութիւնը իրենց հարսի հետ իբրեւ մայրական իրաւունքի ընտանեկան կազմի զարգացման յետագայ աստիճաններից մէկը, աւելի ևս հիմնական բնոյթ է ստանում ու զրական ապացոյց ձեռք բերում լեվիրատի գոյութեամբ: Այդ երկու ձևի խառնակեցական յարաբերութիւնները միևնոյն իրաւաբանական իմաստն են պարունակում, նոյն սաղմից են գոյացել և նոյն իսկ երկրորդի՝ լեվիրատի՝ գոյութիւնը պայմանաւորւում է առաջինի պատմական գոյութեամբ:

Լեվիրատը մի խիստ հին իրաւաբանական հիմնարկութիւն է, որ ծագել է շատ ժողովրդների մէջ և տակաւին պահպանւում ժամանակակից մի քանի ժողովրդների իրաւաբանական կարգերում իր իսկական, անարատ բնոյթով: Մասնաւոր խիստ զարգացած էր այդ հիմնարկութիւնները մովսիսական օրէնքներում, նաև հնդկական օրէնքների ժողովածուների մէջ, որոնք են Մանուի, Վասիշթայի և Վիշնույի գրքերը:

Մեր պատմական տեղեկութիւններին նայած պէտք է ենթադրել, որ հին Հայաստանում էլ տարածուած է եղել լեվիրատը: Դրա դէմ գտնում ենք զանազան ժողովների ու հայրապետների սահմանած արգելական օրէնքներ: Փաւստոս Բիւզանդի ասելով, Մեծն Ներսէսը Աշտիշատի ժողովում սահմանում է՝ «փախչել աւելի ի մերձաւոր և յազգին տոհմակից խառնակութեան ա-

ամուսնութենէ և մանաւանդ 'ի մերձաւորական 'ի նոցա ¹⁾։ Այդ օրէնքը գտնուած ենք նաև Սահմանք և կանոնք կարգի եկեղեցւոյ ւ. ներսխի հայոց հայրապետի ժողովածուի ԻԴ յօդուածում. «Վասն որ զեղբաւր կիսն առցէ. ոչ ընդունի զնա եկեղեցի Աստուծոյ. բայց եթէ մեկնեացին և զմահապարտին ապաշխարութիւն կրեսցեն և ստոյգ ապաշխարեսցեն ²⁾։ Եղբոր կնոջ հետ ամուսնանալու մասին արգելական որոշումն է սահմանել նաև Շահապիվանի ժողովի մեզ ծանօթ 12 յօդ. եթէ հայր զորդւոյ կին ունիցի, կամ զեղբայր զեղբաւր, նոյն պատուհասքն ու նշովք լիցին»... այսինքն ժինչև դարձցի և ապաշխարեսցի է ամ ընդ ունկնդիրս, Գ ամ ընդ ձեռամբ, Մ զրամ աղբատաց, Մ զրամ յեկեղեցւոյ ³⁾։

Լեւրատի հետքերը պահպանուել են հայ ժողովրդական սովորութիւններում նաև մինչև մեր օրերը։ Այստեղ լեւրատի գաղափարը մեծ մասամբ արտայայտուած է փոփոխուած տարբեր ձևերով։ Վարանդայում եթէ մինը նշանուած ժամանակ մեռնում է, այն ժամանակ հանգուցեալի եղբայրն է շատ տնգամ ամուսնանում նրա հարսնացուի հետ ⁴⁾։ Նոյն երևոյթիները տեղի են ունենում Նոր-Բայազէտի ⁵⁾, Գողթան ⁶⁾ և Բորչալիի ⁷⁾ գաւառների հայերի մէջ։ Մանաւանդ յաճախակի ու անպայման կատարուած են այդ տեսակ ամուսնութիւններ մանուկների նշանադրութեան դէպքերում «օրօրոցախաղի» միջոցով, երբ նշանուածներէց մէկը մինչև ամուսնութիւնը վախճանուած է։ Բնորոշն այս բոլոր օրինակների մէջ այն է, որ լեւրատի ձևափոխուած գոյութիւնը արտայայտուած է նրանով, որ ոչ թէ ամուսնութիւնից յետոյ, այլ միայն նշանադրութիւնից յետոյ մահուան դէպքերումն են օրինաւոր ճանաչուած։ Այստեղ պէտք է նկատի առնել երկու հանգամանք։ Նախ՝ որ ժողովրդական սովորութեան իրաւունքի մէջ նշանադրութիւնն աւելի մեծ նշանակութիւն ունի քան եկեղեցական պսակադրութիւնը. առաջինը ընդունուած է իսկապէս իր-

1) Փաւստոս Բիւղանդ. գիրք Դ. գլ. Դ. եր. 64. Ս. Պետերբուրգ. 1883.

2) Արսէն Ղըրտեհան—Հանդէս Ամսօրեայ, № 8, 1908 թ. Օգոստոս. եր 229.

3) Ն. Վ. Մելիք-Թանգեան.—Հայոց եկեղեցական իրաւունք. հատ. Ա, եր. 348.

4) Ե. Լալայեան. Վարանդա.

5) Նոյն. Նոր-Բայազէտի գաւառ.

6) Նոյն. Գողթան գաւառ.

7) Նոյն. Բորչալուի գաւառ.

րև ամուսնութեան զուգման, հաստատման մօմենտ և այդ վայրկեանից հարսնացուն ու փեսացուն անխզելի են, օրինաւոր ամուսնական կապերով պսակուած են համարուած: Իսկ եկեղեցական պսակադրութիւնը համարուած են երկրորդական նշանակութիւն ունեցող, որ միայն սրբազործում է որոշ խորհրդով այն ամուսնութեան զուգումն, որը արդէն հաստատուած է երկու կողմերից:

Երկրորդ հանգամանքն այն է, որ եկեղեցական օրէնքներով եղբօր այրիի հետ ամուսնանալը չհաս է համարուած ու հալածւում է: Ուստի և բնական է, որ լեվիթատի գաղափարը ձևափոխուելով կարող էր պահպանուել միայն նշանադրութեան մէջ, մի ծէսի, որի իրաւական նշանակութիւնը ժողովրդի հայեացքներում աւելի զրական էր և իր հետեանքներով աւելի իրական, քան եկեղեցական պսակի խորհուրդը:

Սակայն այստեղ պէտք է նկատել, որ լեվիթատին կից հայերի մէջ կոյուքիւն ունի նաև մի այլ հոմանիշ երևոյթ. եթէ նշանադրութիւնից յետոյ հարսնացուն է միանում, փեսացուն այն ժամանակ ամուսնանում է սրա կրտսեր քրոջ հետ: Հարկաւ այս սովորոյթը միանգամայն այլ իրաւարանական նշանակութիւն է ստանում և այլ աղբիւրներից է ըզխում: Բայց մեր խօսքը հայ սովորութեան իրաւունքի մէջ տիրող լեվիթատի մասին էր, իբրև ժամանակների ընթացքում սահմանափակուած խմբակցական խառն ամուսնական կապերի մնացորդի: Լեւիթող ենք գտնում ծանրանալ այն դանազան գիտական կարծիքների մասին, որոնք ձգտում են բացատրել լեվիթատի ծագումն ու նշանակութիւնը իբր միանգամայն տարբեր հիմունքներով՝ զլիաւորապէս սեփականատիրական իրաւունքի սկզբունքով: Դորանով հարցի էութիւնը, այսինքն որ լեվիթատը իբրև խմբակցական ամուսնութեան ձևերից մէկի՝ բազմայրութեան էվօլյուցիօնական զարգացման յետագայ աստիճաններից մէկն է, բնաւ չի խախտւում: Այդ իբր տարբեր կարծիքները միայն փորձում են լուսաբանելու, բացատրելու այդ զարգացման, այդ էվօլյուցիօնի պատճառներն ու հասարակական գործօնները: